# ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Կշնորհավորենք Ձեր ընտրությունը իբրև Ռումանահայ թեմի առաջնորդ, մաղթելով ի սրտե Ձեզ եռանդուն և բեղմնավոր գործունեություն՝ ի պայծառություն մեր Ս. Եկեղեցվո:

Մեր սիրո ողջույններն ու օրհնությունը Մեր սիրեցյալ հավատացյալ ժողովրդյան, Թեմական և Պատգամավորական ժողովներու անդամներուն և քահանայից դասուն:

Սիրով և օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5 նոյեմբեր 1960
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեծ գոհունակությամբ կհայտնենք Ձերդ Վեհափառության, որ նոյեմբերի 2-ին, Պատգամավորական ժողովի կողմե, ի ներկայության 26 պատգամավորներու, հոգեշնորհ Տիրայր վարդապետ Մարտիկյան ընտրվեցավ միաձայնությամբ Ռումանահայ թեմի առաջնորդ:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

3 նոյեմբեր 1960
ԲՈՒԽԱՐԵՍՏ